79. ԿԱԽԱՐԱՆԻՑ ՄԱՐԹ ԿԱՁԱՏԵՄ

Կէղնի ու չէգնիր, իրեք մարթ կավեն[1] նստուկ կէղնին, կզրուցին իրարու խետ թե.— Ի՞նչ գործ էնենք, ի՞նչ չէնենք։

Էտմրլա ասելով, հ'իրարու խետ խոսք մեկ էրեցին.—Գողութեն էնենք, ուրիշ էլ ի՞նչ գործ կա, էրթանք համլութեն էնենք, աշխատինք, շատ աղեկ գործ գտանք մեղի համար։ Ձեռք ձեռքի տանք ու աշխատինք։

Գացին թյուշրրներու դյուքրներ կտրեցին, շատ ավիրութեն էրեցին էտ քաղքին մեշ։

Մոռցանք ասել օր էտոնք ի՞նչ մարիֆաթով գողութեն կէնին։ Մեկ հ'ընգեր փակուկ դռան վերեն էրթեր, ասեր՝ «Բացվի՛ր», կրացվեր։ Մեկն էլ ա կիշերով մարթ մի տեսներ, խինգ տարի հ'ընցներ մեշտեղ, էն մարթ շորեր փոխեր է լա, էլման կճանչրներ, թե ֆըլան կիշերվան մարթն ա։ Էն մեկել հ'ընգերն է լա շան լեզու կխասկըներ։

Էդ մարիֆաթով ուրանց գողութեն կէնին։

Էդ քաղքի թյուշրրներ հ'ելան գանգտան թակավորին, թե՝ «Էս գողերուն ճարմ' էրա, մեղի նա՛ մալ մնաց, նա՛ փարա, հ'ըմեն տարան»։

Թակավորն է լա, չկարցավ պռնեց, հ'ելավ ուր շորեր փոխեց, հ'ընդավ քաղքի մեշ, էզդեխ, էնդեխ պտռտվելով, էկավ փողնի[2] մի մեշ, տեսավ իրեք մարթ էնդեխ կզրուցեն իրարու խետ։

— Բարև ձեզ, ախպրտիք,—թակավորն ասաց էն իրեք մար-

---

1 Պիտի լինի կայվախանեն՝ սրճարան (Ծ. Կ.)։

2 Բնագրում՝ փողնի մի մեշ (Ծ. Կ.)։

թուն,—ի՞նչ խորհուրթի մեջ եք, ի՞նչ կզրուցեք, ընձի ձեզի խետ հ՝ընգեր չը՞ք էնեք։

Մարթիկն ասեցին.—Դուն ի՞նչ գործի տեր ես։

Թակավորն ասաց.—Պարապ մարթ եմ, գործ չունիմ։

— Մենք գեշ բաներու ետևեն ենք, օր քեզի հ՝ընգերացուցենք, մեր խետ կպտոտվի՞ս, մեր գործ կէնե՞ս։

— Տունգ շեն, ղաթի ես է լա ձեզ պես հ՝ընգերոչ կպտոտվի։

— Մենք գողութեն կէնենք, մեզի կա մարիֆաթներ, քեզի ի՞նչ մարիֆաթ կա։

— Ընձի լե մարիֆաթ կա. ձեր մարիֆաթներ ի՞նչ ա, ասեք տեսնինք։

Մեկն ասաց.—Ես կիշեր մարթ կճանչնամ։

Մեկն էլ ասաց.— Ես փակուկ դռան էրթամ ասեմ՝ բացվի՛ր՝ կբացվի։

Մեկն էլ ասաց թե.— Ես ջան լեզուն կխասկնամ։

Թակավորն էլ ասաց.—Ես է լա կախարանից մարթ կազատեմ։

Օր հմալ ա, աստծուց կայրի[1] մարթ մեր վըրեն չկանար։ Հ՝էսօր կիշեր էրթանք թակավորի խազինեն[2] ճենջով տեղ ա[3]։

Ու գացին չորսն իրարու խետ։ Գացին ճամբախ ջուն խաճաց։ էն մեկ հ՝ընգեր օր շան լեզուն կխասկըներ, ասաց.—Շուն կասա քի՝ խազնի տեր ծեր խետն ա։

Թակավոր դառցավ վերեներ թե.—Ջանըմ, շուն ի՞նչ գիտա, խոշ ես թակավոր չեմ, թակավոր կուգա ծեր խետ գողութե՞ն կէնա։

Մարթիկ փշու մի տեղ է լա գացին։ էլման մարթն ասաց քի.—Շուն կասա, խազնի տեր ծեր խետն ա։

Մարթիկ կանան. թակավոր էլման ասաց.—Քելե՛ք, ջանըմ, շուն ինչ է, օր ականջ կէնենք։

էլման գացին։ Շուն էլման խաճաց։ Քելելու մեջտեղ էն մարթ օր շան լեզուն կխասկըներ ասաց.—էսօր կադե[4] մի կա գալու մեգի։

Գացին խազինի դուռ։ էն մեկ մարթն ասաց.—Դո՛ւռ, բացվի՛ր։

— Խազինի դուռ բացվավ։ Մտան ներս, ամեկ ուրանց վերցուցելու գորա վերցուցին օսկին, էկան գացին ուրանց տեխ, պախեցին փարեն, ամեկ ուրին տեղ մի գնաց քնավ։

---

1 Աստծուց բացի (Ս. Բ.)։

2 Գանձարան (Ս. Բ.)։

3 Ցուղոտ տեղ է՝ դրամ շատ կա (Ս. Բ.)։

4 Փորձանք, վտանգ (Ս. Բ.)։

Թակավոր խլիսուն հ'ելավ։ Շուտ զապթիեք ճամխեց, զէն իրեք մարթ բռնեցին բերին։ Առավ ասքյար գնաց, ինչ չափ օր մալ տարած ին, խանեց ու բերեց, սորա հրաման տվեց օր էտ մարթիկ կախվին։

Կախելու ժամանակ բերեցին օր կախին, թակավորն ռութպեն[1] խագավ, գնաց էտ մարթեկաց կախարանի հ'առեճ կանավ, զդողեր կանչեց, ասաց թի.—Հ'որի՞ն գոզութեն էրեցիք, օր կախվիք։

Էն մեկ հ'ընգեր ճանչցավ օր ուրանց կիշերվան հ'ընգերն էր թակավոր.—Քեզի պես,—ասաց,—հ'ընգերոչ ռաստ էկանք, օր կախվեցանք։ Չէ՞ գուն մեզի խոսք տվեցիր, օր կախարանից ազատեր։

— Ես օր կախարանից ծեզի ազատեմ, դուք էլա հ'երթում կէնե՞ք օր գոզութեն թարկ էնեք։

— Դուն սաղ մնաս, թե գոզութեն թարկ չէնինք, պիտի կախվինք։

— Դե օր էմալ ա, ինչն օր օսկի տարեր եք, կեսն ծեզի թոխ էղնի, ծեզի ազաա էրեցի։

Գողերն էլ, ժողովուրդն էլ իրեք տիր[2] բռռացին.—Կեցցե՞ թակավոր։

Աստծուց իշավ իրեք խնձոր՝ մեկ ընձի, մեկ՝ քեզի, մեկ լե վիր կուտաս՝ տո՞ւր։

---

1 Նշանազգեստը (Ծ. Բ.)։
2 Անգամ (Ծ. Բ.)։